

## ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ\*

Վերջին հետազոտություններից երևում է, որ հայկական առաջին տպարանը հիմնվել է Վենետիկում 1512 թ., ոմն Հակոբի աշխատությամբ: Չանագան ժամանակներում հայոց տպարանները հաստատվել են նաև Կ. Պոլոստ, Ամստերդամում, Կաղկաթայում, Իլլովում և հայկական որիշ գաղութներում: Համարյա ամեն տեղ էլ այդ տպարանները հիմնվել են ս. Էջմիածնի անոնով, իսկ հաճախ նաև նրա օժանդակությամբ:

Խոկ բուն Էջմիածնում տպարան հաստատելու բոլորովին հնարավորություն չկար պարուկական ամերիշ պատերազմների պատճառով: Միայն ԺԸ դարում հնար եղավ առաջին անգամ տպարան հաստատելու և Էջմիածնում: Ծշմարիտ է, թեն դեռ ԺԸ դարում Հակոբ կաթողիկոսը մտադիր էր ս. Էջմիածնում տպարան հիմնել և այդ նպատակով 1656 թվին Մատթեոս սարկավագին արևմտոք ուղարկեց, բայց տեղական զանազան խարդավանքների շնորհիվ նրա ձեռնարկությունը գլուխ չեկավ:

Վերջապես Սիմեոն կաթողիկոսը 1769 թվին ձեռնարկեց տպարանի հիմնարկության և երեք տարուց հետո տպագրեց առաջին գիրքը, որ «Գիրք Աղօթից»-ն էր: Բայց տպարանի սկզբնական կազմակերպության, մանավանդ նրա ապագան հաստատուն հիմքների վերա դնելու համար դեռ շատ արգելափակ հնանգամանքներ կային. տպարանական պարագաներ, մանավանդ թույլ բերել տալը շատ թանը էր նատում: Եվ ահա նոյն Սիմեոն կաթողիկոսի ջանքով և Էջմիածնում թոյթի գործարան հիմնվեց:


Դժբախտաբար Սիմեոն կաթողիկոսի մահվանից հետո թե գործարանը և թե տպարանը անոշաբերության մատնակցան: Տպագրական գործը երկարատև ու խիստ կորիվ մղեց շրջապատղների անուարքերության, մանավանդ շրջակա բարերարու ցեղերի դեմ, որոնց ս. Էջմիածնի հետ ունեցած ամեն մի սեղմարման միջոցին, տպարանը ավերման էր ենթարկվում և տպագրական գործի հառաջադիմությունը արգելվի հանդիպում: Մի միայն Գեորգ Դ-ի օրով, որ հայոց ամենալուսամիտ կաթողիկոսներից մեկն էր, 70-ական թվականներին տպարանը կենդանություն ստացավ, ոտի կանգնեց և աջողությամբ առաջադիմ սկսավ: Տպարանի վրա առանձին առանձին հոգս էր տանում նաև համագույյալ Մակար կաթողիկոսը, որ և հասուկ շենք կառույց տպարանի համար: Եվ վերջապես ներկա Վեհափա Տ. Տ. Մկրտիչ Ամենայն Հայոց Սրբագնագույն կաթողիկոսը, յոր հասուկ ուշադրության արժանացրեց վանական տպարանը, եվրոպական կատարելագործված տպարաններին հավասարացնելու:

Ապա նոյն թերթը յուր № 8-ի մեջ գրում է հետևյալը.

«Կարճ միջոց մնացած մինչ ցուցահանդիսի բացվելը, ցուցահանդիսի վարչությունը ստացավ Էջմիածնից մի հեռագիր՝ որով հաղորդվում էր՝ որ Նորին Սրբությունն Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. շատ ուշ իմանա-

\* Տարբմակալած «Էջմիածն» ամսագրի 1972 թվականի №№ Դ—ԺԱ-ից:

լով տպարանական գործոց ցուցահանդիսի բացման մասին, չէ կարողացել ժամանակին նայունել որ ցանկությունը՝ մասնակցելու ցուցահանդիսին, ի վերջո նարգնում էր, թե Էջմիածնի տպարանի էքսպոնատների համար տեղ կլինի՝ արդյոք: Այդ նեռագրին ցուցահանդիսի ժողովի նախագահ պ. Ռ. Ռ. Գողիկն անմիջապես նեռագրավ պատուիսանեց, որ «Տպարանի համար




Մ. Արևոյան. Ժողովրդական խաղեր.  
Վաղարշապատ, 1904 թ.

պատվավոր տեղ կհատկացվի», որից նետո Էջմիածնի տպարանի կառավարչից ստացվեցավ տպարանի մասին ընդարձակ տեղեկությամբ մի նամակ, նայունելով թե ուղարկված է արդեն ս. Էջմիածնի տպարանի ամրող ժողովածուն: Այդ ժողովածուն ցուցահանդիսի վերջանալուց նետո կմնա ցուցահանդիսի ժողովի լիազոր տնօրենությանը, այս պարզ գնահատելի է նորանով, որ Կայսերական Ժողովրդական գրադարանը չունի մեան ժողովածու (Ընդգծումը մերն է. Ա. Ե. Ս.): Ինչպես հայունի է Նորին Սրբություն Վեհափառ Խրիմյանը հայոց ամենատաղանդավոր նեղինակներից մինն է: Նա ունի աչքի ընկնող բանատեղծական տաղանդ և նույր փիլիսոփայական դիտություն: Նա բանատեղծ փիլիսոփա է: Հիսուսական թվականների վերջերում Հայրիկը, ինչպես կոչում են նորան հայերը, հրատարակել է Արծվի Վասպորական անունով ամսաթերթը, որ տպագրել է յոր հիմնած տպարանում»:

Ս. Էջմիածնի տպարանի մասը գրավում է բարձր աստիճան այցելուաց

ուշադրությունը: Ի ցոյց տրված գրքերի մեջ, գլխավորապես աչքի է ընկնում մնադիր ձայնագրյալ Ծարականը, յուր հայկական ձայնանիշներով»\*:

Ցուցահանդիսի հանձնաժողովը գնահատելով Մայր Աթոռի տպարանի մեջ տպագրական արթևատի զարգացումը, արժանի գուակ տալու մի գովաանական թերթ հետևյալ բովանդակությամբ.



Հայար ու մի խաղ. Վաղարշապատ, 1905 թ.

«Կայսերական ռուսական տեխնիկական ընկերությունում տպագրական գործի Սուաջին համառուսաստանյան ցուցահանդիս՝ բարձր հովանավորությամբ նորին Կայսերական Մեծություն մեծ իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ: Սուաջին համառուսաստանյան ցուցահանդիսի տպագրական գործի կարգադիրից կոմիտեն որոշեց արտահայտել իր երախտագիտությունը Մայր Աթոռ ու Էջմիածնի տպարանին՝ գործակցելու համար ցուցահանդիսի կազմակերպման գործին, ինչպես նաև հօգուտ Կայսերական ռուսական տեխնիկական ընկերության դպրոցների տպագրական գործի հաջողության համար: Հաստատելով նշված որոշումը, արտահայտում եմ և իմ անձնական խորը շնորհակալությունը»: 15-ը հունիսի 1895 թ.:

Կոնստանտին:

Գեորգ Դ կաթողիկոսի օրով մի անգամ արդեն խնդիր էր բարձրացել տպարանը գուաքնական ատենին ենթարկելու.—այն ժամանակ Գեորգ Դ-ն կարողացավ դեմ կենալ և խնդիրը փակել:

\* «Արարատ», 1895 թ., էջ 141—142, նաև էջ 70:

1896 թվին նորից արդ հարցը քարձրացավ և վերջապէս Մայր Աթոռի տպարանը ենթարկեցին վարչական կարգով Կոմիլասի գլխավոր գրաքննուական ատենին: Արտափուղ այն ինչ որ Բնար չեղալ իշխան Մոհարանուկուն Գնորդ ՚ Կայողիկոսի օրով անել, կոմիլասի կոտավարությունը այժմ իրական դարձրեց իշխան Գոլիցինի օրով:

ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԱՐԱ ԱՅՐԻ ՊԱՐԵՐՆԱՆԵՐԻ ՀԱՅՐ

ԸՆԿՐԵՑ

Դակո. Փի. Մ. ԱՐԵՎԱՆ -

պատուա և նախաւա և առաջաւ

ՎԱԴԱՐԱՎԱՑ

Տպարան Մայր Արքուա Ա. Եւականների

1906

Ն. Հ.

Մ. Արևոյան. Աշխարհաբարի քերականություն.  
Վաղարշապատ, 1906 թ.

Տպարանը գրաքննական ատենին ենթարկվելով Երևանի նահանգապետի կողմից հատուկ հսկող անձն նշանակվեց, որ կատավարության կողմից հսկում էր տպարանի գործառնության վերա, որպեսզի իբր թե հակապէտական քան չտպվի, իսկ ամենօրյա տպված ստենատեսակ գրքերից, բրոշյուրներից, և նայտարարություններից մեկ մեկ օրինակ պահպամ էր հատուկ պահարանում ապագայի ստուգության համար արձանագրելով օրական տպարանից դրս եկած որևէ նյութ առանձին ժապավենած և կնքած մատենի մեջ, որ առացված էր Երևանի նահանգական կառավարությունից: Հակիչը միևնույն ժամանակ տպված ամեն գրքից, բրոշյուրից և այն 18 օրինակ ողարկում էր Կովկասի գրաքննական ատենին (Կավազսկий պենզурный центральный комитет) և տաս օր անցնելուց հետո միայն (եթե գրաքննական ատենից տպագրված նյութը արգելելու որևէ գրություն չէր ստացվում), իրսկունք էր տպագրված նյութը արգելելու որևէ գրություն չէր ստացվում:

Գրաքննական ատենի հսկողությունից ազատ մնաց միայն և Էջմիածնի պաշտոնական Արարատ կրոնական ամսագիրը, որի վերա հսկում էր և տըպված նյութերի պատասխանատու էր նախարկում Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Նորա հրամանառով էին լույս տեսնում ամսագրի համարները: Բայց Արարատն էլ ողարկվում էր գրաքննական ատենին տարթելուց հետո և 10 օրը անցնելուց հետո միայն ցրվում: Զնայած վերոգրյալ խիստ անախորժ համագամային, Մայր Աթոռի տպարանը շարունակեց յոր եռանդուն գործունեությունը: Նորա մերենաները ճկվածալով՝ գիշեր-ցերեն՝ ոչ միայն արտադրութ էին կրոնական, պատմական, գրաքննական և այլն բովանդակությամբ ինքնուրույն և թարգմանական գրքեր և բրոշուրներ, այլև շարունակվում էին պատրաստություններ տեսավել և հետապնդվում էր ս. Գիրքն անպարհանձն նոր հրատարակությամբ Մայր Աթոռի տպարանից լոյս ընծայելու միտքը, որի մասին վայուց մտածում էր Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը:

Այդ ժամանակ Մայր Աթոռի տպարանը և հարստացել էր զանազան մերժաներով և ընդարձակ գործունեություն էր սկսել, որի համար ի Տեր համգույցը Մակար կաթողիկոսի, շինել տվյալ շենքը շատ փոքր էր:

Մայր Աթոռի միարանության առաջազդում անդամ տ. Սուրբաս արքեպիսկոպոս Պարզամը ընդառաջ գնալով այդ մեծ կարիքին և հրամայողական պահանջին, 1901 թվին յոր միջոցներով, տպարանի շինության կից, հարավային կողմից շինել տվեց երկու ընդարձակ կամարակապ դահլիճներ և մի միջանցք, որ գետեղեցին տպագրական բոլոր մամուները և գրաշարանոցը: Այդ դահլիճների տակին շինվեց մի խիստ չոր և ցեմենտած ներքեատուն ամենատեսակ թղթերի և այլ պայտերի պահեատի համար:

Ս. Գրքի տպագրությունը շուտով իրականացնելու համար թերել է տրվում նաև հատուկ տառեր, զարդեր և այլն: Այլ և պատվեր են տպիս և ստանում № 5 թույզը, օգման 50 ֆնդամոնց, ընդամենը 420 օգմա: Կարճ ժամանակ անցած տպարանից լոյս տեսավ տպագրվող ս. Գրքի առաջին մամուլը, որը և ողարկվեց բանասերներին և հայտնի անձանց իրենց կարծիքները հայտնելու համար: Դժբախտաբար Մայր Աթոռի համար այդ մեծ և պատվալոր ձեռնարկությունը հետագայում ինչ-ինչ պատճառներով արգելրի հանդիպեց և ս. Գրքի տպագրությունը անսպասելի կերպով դադարեց:

Նեռև Գեորգ Դ կաթողիկոսը 1870 թվի հունվարի 18-ի № 18 ս. Սինոդի տվյալ կոնդակով տպարանական ժողովի անդամներին հաստատելով՝ առաջ է թերուն նոցա պարտավորությունները. և թեև դրամների ստացումը և զանանը կենտրոնացնում է Սինոդի մեջ, բայց և Բոդ. Է—Ը-ի մեջ շեշտում է թե ժողովը պարտավոր է հաճախակի զննել տպարանի տումարները և հայտնաբերել Արարատ ամսագրի և այլ նեկեղեցական գրքերի և մատյանների արժեքից թեմական իշխանությանց վերա մնացած ապահովները «և չողովով երբեք ապահով ի դրամոց» և հարկավոր դեպքում դիմել Սինոդին, որ վերջինս պահանջ նոգենոր աշխաններից ապահովները: Այս անպահովների և կամ առհասարակ տպագրված և թեմերն ուղարկված բոլոր տեսակի գրքերի արժեքի տուցման մասին Սինոդը պատրաստ էր խկույն տեղեկացնել տպարանի վարչությանը՝ այնուեղ մատյան անցկացնելու համար:

Հանգուցյալ Գեորգ Դ-ի այս կարգադրությունը հետագա տարիներում մոռացության է տրվում և հետզիւտեւ ստեղծվում է տպարանի դրամական հաշիվների այլ խառնակ վիճակը, որը կամունում էր կանոնավորել նոգելույն Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը:

Խրիմյան Հայրիկը հայրապետական գահ բարձրանալուց հետո մեծ ուշադրություն դարձրեց նաև Մայր Աթոռի տպարանի ել և մտից հաշիվները կանոնավորելու վերա, որը կենտրոնացած էր ժամանակին գործող ս. Սինոդի մեջ և ուներ յոր հատուկ սեղանը: Զնայած դորան շատ անկանոն, գուցե և ան-

վույթ էին տարիում տպարանի նաշխվերը. շատ դժվարությամբ, նույնիսկ անհարելի էր ճիշտ հաշիվ կազմել տպարանի կառարած արտադրական աշխատանքի մասին, թէ ինչքա՞ն արդյունք է տալիս այդ հաստատությունը և ինչքա՞ն օգտու:

**ՀԻՆ ԵՒ ՆՈՐ  
ՊԱՐՄԱԿԱՆ ԿԱՄ ԱՆՎԱԼԻՔ  
ԾԱՐԱԿԱՆՆԵՐ**

1902 ՀՆԱԱՑԵՑ  
ԽՈՅԻ ՀԱՐԱԿԵՑ ԾԱՐԱԿԱՆ  
ՄԻՆՐԱՆ ՄԱՐ ԱԲՐԱՄ Ռ. Էջմիածնի

ԱՐԴԵՎՄԵՐԻ ԵՒ ԽՈՅԻ  
ԽՈՅԻ ՍՈՒՐԵԽՈՎԱԾ ԱՐԵՎԻԿԻՄՈՎԱՆԻ ԳԱՐՁԱՐԵԱԾ

ՎԱՇԱՐԺՈՎԱՆ  
Էջմիածնի Հոգուած Մար Աբրամ Ռ. Էջմիածնի  
1911

Սամակ վրդ. Ամառունի. Հին և նոր պարականուն  
կամ անխամեր շարականներ.  
Վաղարշապատ, 1911 թ.

Տպարանի վարչությունը միայն տպում և ուղարկում էր թեմական իշխանություններին՝ Արարատ ամսագիրը, Էջմիածնի օրացուցը, չափարեալան մատյաններ, եկեղեցական և աշխարհիկ բովանդակությամբ գրքեր: Այնուևան տպարանի վարչությունը չէր յատևվում ուղարկած ապրանքի արժեքը գննելու գործին: Այդ պարտականությունը ընկալում էր յորաքանչյուր թեմի թեմական իշխանության վերա, որը սակայն պիտի ասել, որ դատապարտելի անփոյթ էր դեպի Մայր Աթոռոի հասանելիքները գանձելը և ըստ պատկանելվույն հասցնելը: Կանոնավոր հաշվետվության բացակայության պատճառով գավառներում և քաղաքներում շատ յորացումներ էին կատարվում:

\* Ակերսանդրապոլի փոխանորդության (այժմ Շիրակի թեմ) գյուղերի գործակալների և քամացաների 1907—1916 թվերի գործունեության բնությունը կատարեց տողերին գրությունը և 3500 բուրյուց ավելի գողած դրամ հայտնագործեց, որը գողողներից գանձվեց և թեմական իշխանության ներկայացվեց: Նոյնպիսի ապահովների գանձումը կատարվեց ևս Բնակչարիայի թեմում 1899—1908 և մի քանի հազարի հասմող ապահով գումարներ գանձվելով, ներկայացվեց և Սինողին: Նաև մեղմակի:

Ի Ակատի առմելով այդ համգամանքը, տպարանի հաշիվները կանոնավորելու համար Խրիմյան Հայրիկը 1895 թվի դեկտեմբերի 11-ին արդեն այ կոնյակի էր տվել ս. Սինողին, բոլոր հաշիվները տպարանական վարչության մեջ կենտրոնացնելու համար, ուստի և ս. Սինողն էլ 1898 թվի փետրվարի 5-ի № 155 որոշումով հրամանագրում է թեմական բոլոր աստյաններին, որ տպարանին վերաբերյալ դրամները միայն տպարանական վարչությանն ուղարկեն:

Թե ի՞նչ պատճառով այդ կարգադրությամց կատարումը դանդաղում է մոտ յոթ տարի՝ հայտնի չէ: Հավանականորեն 1895 թվի հայերական կոսորտած Տաճկաստանի և հայության մեջ տեղի ունեցած հոգումներն (տաճկահայոց փախուստը ուստահայտատան և այլն) եղան դորան պատճառ: Ուստի Խրիմյան Հայրիկը 1908 թվի հունվարի 31-ին ս. Սինողին տալիս է թ. 150 հետևյալ կողմակը.

«Մկրտիչ ծառա Հիսուսի Քրիստոսի... Սինողի ս. Էջմիածնի: Աստի բավական ժամանակ առաջ ես մի կոնյակ գրեցի Սինողին, բայց Սինողի ուշադրության չառապակ և մնաց առանց գործադրության: Ներկա թվականին կապատավորիմ նոյն կոնյակին միուր հավատարիմ կրկնել:


Մայր Աթոռու ունի մի հաստատություն վաղուց ի վեր, այն է տպարան, որն՝ բարոյապես և թե՛ հյութապես կարի արդյունաբեր և շահագործող մի հաստատություն է: Բայց ցավալի է նոյն և նոյնիսկ ամոթ, որ այսօր ո՛չ կաթողիկոս և ո՛չ իսկ Սինող, որո ձեռքս է հաշվական գործեր, գիտե կազ հավաստյակ վերահսկու է թե Մայր Աթոռի հարուստ տպարան շահագործո՞ղ թե՛ շահակորույս է: Ցուր բոլոր գործառնությունք, անստոյգ վիճակի մեջ խոնված են. յուր տնտեսական անկանոն ճապար հաշիվներ, գիտեք արդյոք թե քանի՞ դժվարին է հաշվական մեթոդով ստուգել և կարգադրել: Ես նրաշք կհամարիմ եթե մի հաշվագետ անձն կարենա մեր տպարանի հաշվական պատկեր դուրս բերել: Ի՞նչ են պատճառներ և ո՞վ է պատասխանատուն: Այս հայտնի է, որ Մայր Աթոռի ամենայն հոռի գործառնությանց պատճառ կարողիկուն է և այս արդար դատարանը ոչ միայն Մայր Աթոռի միարանությանն է, այլև համայն հայոց ժողովրդին, որպես թե կաթողիկոս պետք էր նաև որ տպարանապետ լինել:

Այլ ես ասեմ ձեզ, տպարանի հոռի տնտեսության պատճառներ շատ են. և և կթողում երկրորդական և երրորդական փոքր պատճառներ, միայն գրիխավոր պատճառներ հառաջ կրերեմ, զոր բավական կհամարիմ այն չափով ևս խելամուտ կիմնի Սինողի միայն թե ուշադրության առնու:

Ա. Նախ որ տպարանին արվեստին գործ ամենաքարդ մի գործ է, ո՞ւյթ են եղեք տպարանի վարիչներ և տեսուչներ, գործին անհմուտ և արվեստին անգիտակ վարդապետներ և այս խնայության համար եղած է անշուշտ, վասընքի դուրս է վարձելով տպարանի մի հմուտ վարիչ, մեծ ոռնիկ պետք էր վճարել, բայց կա այսունո՞ւ մի մնացված հաշիվ, այն է հմուտ տպարանապետ յուր վարձու փոխարեն տպարանի արդյունքն կհանել:

Բ. Ամենամեծ և ամենորհուրդ մի պատճառն այն է, որ տպարանի վարիչ վարդապետներ կարգված են տեսուչ տպարանի առանց երբեք պատասխանատվության և համարված են իբրև բանվոր կամ գործավոր, վասնզի ինքն միայն ըստ նախամաշվույն կատանա որոշյալ գումար, որով թե գրաշար գործավորաց և ոռնիկ վճարում է և թե Արարատ, Օրացուց և այլ գորեք կտպագրեն և կհանեն դուրս և այդ ամենաորոշյալ գիմներ Սինող գանձում է և ինքն տպարանի տեսուչ ոչինչ չգիտե, ոչ շահ և ոչ վմաս, ճիշտ նույնպես Սինողին

մեջ շգիտն: Չոր օրինակ, մի կոնսիստորիային փող կումբնա Սինոր, կոնսիստորիայն այսքան միայն գում է, այսքան փող Արարատի կամ Օրացուցի գին է և այն: Եվ կարծեմ Սինոդն մի որոշ գումար, որպեսզի տպարանի արդյանց գումար որոշ կերպով արձանագրեն, որով թերևս կարելի լինի հաշիվ համեմ: Սիթե՛ Սինոդն փորձով շգիտն մեր վիճակավոր առաջնորդաց անհոգացող և անտարբեր դրույթուն, որ երբ պաշտոնի գլուխ անցնեն, այն օրեն մոռանում են Մայր Աթոռ և չե ինչ փույթ նոցա որ տպարանի վերաբերյալ արդյուն ամենայն կերպով փութաշան լինին գանձելու: Եվ գիտեք թե որքան գումար ապահովեր կան այսօր առանց գանձելու մնացած:



Ա. Արեւյան. Աշխարհարարի շարամյուսություն.  
Վաղարշապատ, 1912 թ.

Եվ ինչ է այս դժվարությանց, և անշահարեր դարման Մայր Աթոռի տպարանին: Ահա նոյն՝ կրկնում եմ դարձյալ՝ նախ տպարանի տեսուչ պարտավորապես պատասխանատու բռնել. երկրորդ՝ ինչ որ կարգադրե տպարաննեն՝ նոյն իմբն պետք է գանձե, որպեսզի կարենա եկից և մտից հաշիվ ուղղությամբ տալ, որպեսզի կարենանք իմանալ շահն ու զիան:

Երբ տպարանի տեսչություն ըստ ամենայնի փույթ ունենա գանձել տպարանի արտադրած արդյունք և ամեն ամիս հաշիվ ներկայացնել, այլևս այնշափ հարկ չմնար Մայր Աթոռի գանձարաննեն ծախտոց համար գումար պահանջել, որո համար գրեթե տասն և չորս հազար ռուբլի որոշված է նախարարվին մեջ: Միայն թե պատրաստի գումար չունեցած ժամանակ գանձարանն հարկ եղած գումար խնդրել: Ինչպես նաև լինի ավելորդ գումար պարտավոր է գանձարանին հանձնել: Բայց ըստ իս անհրաժեշտ մի կարևորություն է, որ

տպարան միշտ պահեասի դրամագլուխ ունենա, որպեսզի բոլորովին ազատ լինի գանձարան:

Երրորդ, տպարանի տեսչություն պետք է ունենա մի ծանոթ ժողովրդին նարգելի մի եկեղեցական գործակալ թեմական կենդունի մեջ, որ տպարանի տեսչության կողմեն իրենց դրկված թե՛ գրյանք և թե՛ Արարատ, Օրացուց ինքն ընդունի, հրահանգին համեմատ ցրվե բոլոր թեմի վիճակներ, որչափ կարելի է Արարատի բաժանորդաց գիմեր փոխով գանձել:

Երբեմն ևս տպարանի տեսչություն կարող է կախողիկով կոնդակով մի վարդապետ հանել բոլոր թեմեր թե՛ գործակալներուն գործեր քննել և թե՛ ապառիկ մնացած գումարներեն հավաքել: Այս ամեն ուշի-ուշով և փորձով խև Ակատելով ևս բարվոք համարեցի փոխել այս անկանոն տնտեսության կարգ:

Ուստի պատվեր տպակ հայուսարարեմ սրբազն Սինոդին, որ այսուհետև տպարանի տեսչություն պիտի գանձել տպարանի ընդհանուր արտադրությանց արդյունք կանոնավոր ել և մտից հաշիվ բռնելով ամսե ամսի պիտի ներկայացնե մեզ, իսկ ես իրեւ տեղեկություն կհայուսարարեմ Սինոդիդ:

Այս Հայրապետական որոշումն պարտավոր է Սինոդի ընդունելու առանց որևէ պատճառաբանության: Վասնա Մայր Աթոռի շահ և կանոնադրության օրենք այս կպահանջնեն և այս պահանջման ուղղակի պատասխանառու կաթողիկոսն է առաջի համայն ազգին:

№ 154 հ31 Բունվարի 1903 ամի<sup>45</sup>:

Խրիմյան Հայրիկը կանոնավոր իրագործել տալ յուր տված կոնդակը, ճույն թվի մարտի 18-ի թ. 854 Սինոդին տված կոնդակով\* տպարանական նոր վարչություն է հաստատում, որի ամդամսերի մասին տալիս է տեղեկություն և Սինոդին և № 805 կոնդակով հրահանգում և պատվիրում է տպարանի 1902 թվի ելքի և մուտքի մասին մանրամասն հաշիվ պատրաստելու և իրեն ներկայացնելու\*\*:

Այդ թվին հայոց եկեղեցական կյանքում խոչոր դեպքեր տեղի ունեցան: Յարական կառավարությունը գրավեց հայոց եկեղեցական և վանական շարժական և անշարժ գույքը, փակեց դպրոցները և շննդերը պետականացրեց: Հասարակության բոլոր խավերում, ինչպես և Էջմիածնում, խիստ հոգումն առաջ եկավ, որ յուր վերա դարձրեց ամենքի ուշադրությունը և կլանեց ամեն ույժն ու ջանք: Գույք այդ է լինում պատճառ, որ տարի է անցնում գործերը մնում են ճույն դրության մեջ: Ուստի և Խրիմյան Հայրիկը հաշորդ 1904 թվի Բունվար ամսին տպարանի նոր տեսուչ է կարգում ու Մամրեն վարդասկան

\* Սկրտիչ ծառայ Թիուսիք Քրիստոսի... Սինոդի և Էջմիածնի, կոնդակա մերով 17-ը ամսոյս № 807 կարգեցար տպարանական ժողով յահազ կառավարելու կանոնադրասկւ գործ տպարանի Մայր Աթոռոյս և անդամք են մետսեալք ա) տ. Մեսրոպ մագիստրոս վարդապետ Մովսիսեան, բ) տ. Մամրեն վարդապետ Մելիք Սովոր Սովոր և գ) Դայիր Սահինդոց Սեղիկեան: Ուստի առաջարկեած ատենիդ ծառուցի զնոսա վարիչ տպարանին և ի պահանջեն հարկին տալ դրամն վասն ծախուց տպարանին, և ի դեպ պահանջեն զնաշուներութիւն մինչ ցառածին տնօրէնութիւն մեր: № 854 ի 18 մարտի 1903 ամի<sup>46</sup>:

\*\* Սկրտիչ ծառայ Թիուսիք Քրիստոսի... Սինոդի և Էջմիածնի: Յանկացնեալ մեր ունել մանրամասն տեղեկութիւն եկամտից տպարանի Մայր Աթոռոյս, պատու կոնդակա մերով առաջարկեամբ Աստեմիդ ընդ փոյք տալ կազմեն զնաշի մտից տպարանի անցելոյ 1902 ամի, այն է սուածալ բաժնեգինը Արարատի առանձին, գինը վաճառեալ Օրացուցաց առանձին և շնչը վաճառեալ գրեանց և այլ արեանց առանձին և մատուցանել մեզ: № 805 ի 18 յունիսի 1908 ամի<sup>47</sup>:

Հյուտ, Արարատ, 1908. էջ 8 և 115:

Մելիք Ադամյանին\* և օգնական տալիս ներսւու արեղային Տեր-Միքայելյան, որոնց հայունելով տպարանի ել և մտից խան վիճակի մասին, որ Սինոդում շգթուն թե ո՞րքան ապադիկ ունի տպարանը և ինչ տեսակ գրքերի, մատյան-ների համար ի՞նչ գումարի, պատվիրում է նոր վարչությանը ինքը գանձն թեմական իշխանությանց ուղարկած զանազան գրքերի արժեքները և ստանձին հաշվով ներկարացնի ս. Սինոդին: Այս առթիվ կաթողիկոսը տալիս է նետևյալ կոմիտակը.

*Արդեռության համար Պետական Խորհրդի անդամ  
Գ. ԳՈՒՂԱԿ ՅՈՎԱՆԻ ՅՈՎԱՆԻ ՅՈՒՀԱՆԱԿ*

## ՀԱՅՈՑ ԲԱՌՈՒ ԲԱՆ

—♦♦♦♦♦—

*Ա Յ Ա Տ Ա Ս Ի Ւ Ե ց  
Ս Ա Հ Ա Կ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ա Մ Ա Տ Ո Ւ Ն Ի  
Միքան Մայր Աթոռոյ և Էջմաներ*

### Վ Ա Լ Ա Ր Ծ Ա Վ Ա Տ

*Եկեղեցաշարժ Տպարան Մայր Աթոռոյ և Էջմաներ  
1912*

Սամակ վրդ. Ամառունի. Հայոց բան ու բան,  
Վաղարշապատ, 1912 թ.

«Սկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի... նոգեշնորի տ. Մամրէ վարդապետի տեսչի տպարանի Մայր Աթոռոյ նայրապետական օրինութեամբ յայտ առնենք. Կոնդակա մերով յ31 տոնուարի անցելոյ հմբ. 154 տուաք գիտել Սինոդի և Էջմիածնի զարդի անկերպարան վիճակի տպարանի Մայր Աթոռոյ

\* Հմտ. Արարատ, 1904, էջ 292:

և զիամնակ վիճակէ ել և մորից նորին, որ անյատ է և ի Սինոդէ և ի Վարչութեան տպարանին զապաղիկ մնացեալ գումարաց և ի բանակութեանց նոցին և թէ վաճառելի գրեմոյ տպարանին, եթէ զինչ տեսակաց (Թրացոյ, Արարատ, Տիկեղ, գրեանք) որքան անձնար մնան ի զանազան վիճակաց մերոց Ռուսական տանի:

Առ ի բառնալ զայս օրինակ գործառնութիւն և ի գիտակ առնել զՍինոդն և զվարչութիւնն տպարանի, մեր լիշեալ կոնդակաւ մերով հրամայեցար ընդունել գգրութիւնն այն եթէ վարչութիւն տպարանին պարտ է գանձել զապանիկս իր զգին վաճառեալ գրեանց տպարանին և ինքնին հոգալ զծախս իր տալ յախոյ ամիս զհաւաքեալ դրամն ի Սինոդն հանդերձ ամսական հաշուետքութեամբ եթէ զի՞նչ արդեանց որքան վաճառեաց և զի՞նչ գանձեաց, ամենիմ ինքն պատուախանաւոր լինելով հաշուական գործառնութեանց իրոց: Արդ, այսու կոնդակաւ մերով յայտնելով ձեզ զմիտս վերոյիշեալ կոնդակի մերոյ, պատուիրեամբ զի յնտ այսու վարչութիւնդ, ինքնին ժողովական զմուսն տպարանին իրոյ ինքնին միայն պահեացէ զհաշիս դրամական, որպէս ասացաք իրաքանչիր ամսավերցի և զգանձեալ դրամն ի Սինոդն հանդերձ հաշուեթեովք, զի ի մի վայր կենտրոնանալով մուտքն տպարանին հնար լիցի և ստոգել զհաշիս ապառկաց և վասն կանոնաւոր կատարման հրամանի մերոյ առ ի դիրութիւն քեզ, նշանակեամբ զբարեջնորի ներսէս արեղայն յօդնական քեզ առ ի վարի համերաշխ զգործն տպարանիդ և հսկել կանոնաւոր հաշուապահութեան, որպէս և ի վերայ գործոց գործառքաց տպարանիդ: Յայտնելով զայտան պատուիրեամբ հրահիրել զներսէս արեղայն ի գլուխ պաշտաման իրոց<sup>16</sup>:

Հանգուցյալ կարողիկոսի այս կարգադրությունից հետո է տպարանի գործառնությունը, մանավանդ հաշվապահական ձեզ դարձյալ մնան է նախկինը: Գոյն դրու պատճառը Սինոդի անտարերությունն էր, որ 1903 թվից սկսած դրական քայլ չէր անում այդ խնդրի նկատմամբ:

Մայր Աթոռի տպարանը վանքի ամենահին հաստատություններից մեկն է եղել: Ս. Էջմիածնի տպարանը յուր ժամանակին Կովկասում համարվում էր ամենահարուստը, հատկապես հայերենի վերաբերյալ մասով: Նա ուներ հարուստ գրաշարանց՝ հայերեն, ուսուերեն, գերմաներեն, հունարեն, լատիներեն, երայեցերեն, վրացերեն և այն ազգերի տառերով, ինչպես և երաժշտական խազերով: Ուներ լավ մերենաներ, ձուլարան, կազմատուն, հառուստ պահեաստ թղթի և այլն\*: Բայց տպարանը չի ունեցել մասնագետ կամ տպագրական գործին լավատեղյակ կառավարիչներ: Տպարանի կառավարիչներ կամ տեսուչներ նշանակվել են Էջմիածնի միարանության անդամներից անհստիր կերպով, որոնք համարյա թիշ բացառությամբ 1 կամ 2 տարենք մի անգամ փոխվում էին: Նոցանից ոչ մեկը տպագրական գործին ծանոթ կամ հմուտ չէր, ուստի և չէին կարող տպարանի մեջ կատարելագործված տեխնիկա մտցնել և նորա գործառնությունը օգտակար դարձնել:

Այս բոլորն ի նկատի ունենալով, վանքն աշխատեց աշխարհիկ անձանց ձեռքով էլ կատավարել տպարանը: Սակայն վերջիններն էլ օգտակար չեն եղել և տպարանը երբեք չի կարողացել յուր արդյունքներով յուր ծախքերը ծածկել: Այսպես օրինակ 1908 թվին տպարանը մուտք է ունեցել 4511 թ 26

\* Մաս. 1910 թվին տողերիս գրողը կազմեց տպարանի գույքի (ինվենտար) ցուցակ՝ կշռեղով ամենանուակ տառերը, մարզամները, ծաղիկները, բոյթի պահեաստը և այլն: Այդ ցուցակից մի օրինակը պահպան տպարանում, երկրորդ օրինակը նանձնվեց սրբազն Սինոդին: (Մաս. նեղինակի):

կուպ. և Սինոդը տպարամին տվել է ծախսերը ծածկելու համար 8716 ր. 34 կուպեկ: 1907 թվին տպարանը մոտոք է ունեցել 6204—95 կուպ. և Սինոդը տվել է ծախսերը ծածկելու համար 9575 ր. 75 կուպ. և այլն:

Անա այսպիսի ձեռվ տպարանը առաջ գործել է և այժմ էլ շարունակում է: գործել մինչև 1908 թիվը, եթե տպարամի տեսուչ է նշանակվում առ Երևանդ վարդ. Տեր-Մինասյան, որի օրով տպարանի գործառնության պատկերը ար-մատուակեա փոխվում է:

Խորիման Հայրիկի մահվանից հետո 1908 թվի հունվարի 21-ին Սինոդը թ. 38 հնույալ հրամանում է արձակում.

«Նախ հաստատել զմախառնաշի մտից և ելից տպարամի վասն այսր 1908 ամի ի գումար բասն հազար չորս հարիր բորբեաց մտից հնգետասան հազար երեք հարիր յիսուն և հինգ բորբեաց և 08 կուպ. ելից և զվալերացու-ցեալ պատճեն նորին առաքել առ վարչութիւն տպարամի ի կիրառութիւն:

**Երկրորդ.** Ծրագրերական հրամանաւ յանուն ամենայն կոնսիստորիայից Հայոց Ռուսիոյ պատուիրել հոգևոր կառավարութեանց և գործակալաց զի փոթասացին ի ժողովել զամենայն ապառիկս զնոց Արարատ ամսագրի, Օրա-ցուցաց, ժապաֆինեալ մատենից և այն և առաքել յայսմենուէ ոչ ի Սինոդս, այլ առ վարչութիւն տպարամի, այլ և զգին մատենից, Օրացուցաց և առհա-սարակ զամենայն հասոյթ տպարամի յայս ամի առաքել անմիջապէս առ վարչութիւն նորին, գուն գործելով, զի դրամքն առաքեացին յառաջնում, իսկ լիսամենիկ տարույ և տալ տեղեկութիւն Սինոդիս առանձին յայտարարու-թեանքը:

**Երրորդ.** Պատուիրել ամենայն կոնսիստորիայից Հոգևոր կառավարու-թեանց և գործակալաց, զի փութոյ առաջի արացեն վարչութեան տպարամի զմիշտ հաշի վաճառելի եկեղեցական մատենից զբանակութենէ վաճառելոցն և զմնացելոցն առ ինքեանս, այլ և ծանուցանել թէ ե՞ր և յանուն որո՞յ առաք-եալ են զինք վաճառեալ գրենոյն»\*:

Կարճ ժամանակ անց Սինոդը արձակում է թ. 173 հրամանը կոնսիս-տորիաներին, որով հայտնում է թէ՝ «զի վարչութեանց տպարամի Մայր Աթո-սոյ տուալ են իրառունք քննելոյ զամենայն հաշիս հոգեւոր հաստատու-թեանց, որ ընդ տպարամի և պահանջելոյ զապատիկս ի ձեռն անդամոյ որուր վարչութեանց կամ պաշտօնական գրութեամք»\*\*:


Սինոդի վերոգրայլ կարգադրություններով 1903 թվից սկսած ի Տեր հան-գուցյալ Խորիման կաթողիկոսի օրինական պահանջը տպարամի ելքն ու մուտ-քը լոր մեջ կենտրոնացնելու վերջապես իրականանում է:

Ընորինիկ տպարամի տեսուչ առ Երվանդ Վարդապետ Տեր-Մինասյանի ձևոներեցության, որ արտասահմանան համալսարանական բարձրագույն գերազանց կրթությամբ օծուված մի անձն էր և լավ ծանոթ նոյն տեղերի լա-վագույն տպարանների հետ, ուներ և անձնական հմտություն այդ գործի մեջ, Մայր Աթոռի տպարանը կտրուկ կերպով ողիղ ճանապարհ է բոնում, գոր-ծանությունը ընդարձակվում է, տպագրությունը թէ՝ արտաքուստ և թէ՝ ներ-քուստ գեղեցկանում: Հաշվապահությունը կանոնավորվում է. բոլոր թեմերից հետզետեսն դրամներ են ատացվում, որոնց մեջ խոշոր տեղ են բոնում. նախ-կին տարիների պատիկները: Ընորինիկ տպարամի հաշիվների այսպիսի կանոնավորման տպարամի վարչությունը լոր ծախսերը ծածկելուց հետո

\* Արարատ, 1908, Բ, էջ 134: Տես նաև անդ, էջ 357:

\*\* Արարատ, 1908 թ., էջ 357:

Առաջ 1908 թվին ոչ միայն զուտ արդյունք է տալիս Սինոդին, ըստ Բաշվապահական տումարի, 5511 բորբ 99 կոպ., այլև նախկին տարիներից մնացած 3598 բորբ 98 կոպ. պարտքն է վճարում:



Շողակաթ. Հայագիտական ժողովածու.  
Վաղարշապատ, 1918 թ.

Տպարանի գործառնությունը կանոնավոր հիմքերի վերա դրվելով, Արարատ ամսագրի և առհասարակ այլ գրքերի տպագրությունը նոր կերպարանը է ստանում մաքրության ու արվեստի գեղեցկության տեսակետից:

Այնուհետև Մայր Աթոռի տպարանը արագությամբ լույս է ընծայում ոչ միայն ս. Էջմիածնի միարանության աշքի ընկառող գիտական անդամների երկասիրությունները և աշխատությունները, ինչպես օրինակ՝ Գալուստ Տեր-Մկրտչյան, Հովհաննես Արքեպիսկոպոս, Մեսրոպ Եպոս, Տեր-Մովսիսյան, Կարապետ Եպոս, Տեր-Մկրտչյան, Գարեգին Վրդ. Հովհաննեսիան (հետո Գարեգին արքեպոս.), Կոմիտաս Վարդապետ Սողոմոնյան, Երվանդ Վրդ. Տեր-Մինասյան, Մեսրոպ Վրդ. Մարտունյան, Խերսես Վրդ. Տեր-Միքայելյան և այլ միարանների, այլ և Գևորգյան նովուր ճեմարանի ուսուցիչների և այլ աշխարհիկ ու հոգևորական անձանց պատմական, բանասիրական, քննադատական գե-

ունեցիկ գրականության և այլն վերաբերյալ աշխատություններն է լուս ընծայում\*:

Մայր Աթոռի տպարանի այս փառավոր և արդյունավետ գործունեությունը դժբախտաբար կարճատև եղավ: 1914 թվին ծագեց համակարգության մեծ պատերազմը, որը բոլոր ազգերի կողմուն-կրթական կյանքի խաղաղ ընթացքը նեղաչքեց և վերջը բոլորումին հանգարեց կամ այլ ուղղություն տվեց: Որքան պատերազմը խորացավ և նվազական բոլոր պետությունները ականայից պատերազմին սահմանից դարձան, այնքան ավելի մարդկային կյանքն ու մտածողությունը յոր ճշմարիտ ոտիից դրս եկավ, ամեն տեղ, մանավանդ Անդրկովկասում հաղորդակցությունը դժվարացավ, որովհետև ճանապարհները բռնված էին զորք և ուզմակենանամթերք տեղափոխելով:

Ուստի և տպարանական գործերը հետզհետև դադարեցին մարդկանց հնատարքքելոց և երկրորդական տեղ բռնեցին: Չափ տեղ և գլխավորությունը Հայոստանում ամենքի ուշադրությունը գրավեց պատերազմի հետևանքով Տաճկանայատանից և այլ տեղերից փախած և Էջմիածին, Երևան, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ և այլ քաղաքներում ապաստան գտած և փողոցներում ու պատերի տակ թափված գաղթականներն ու որբերը: Տեսարանը սուկալի էր: Մարդկային միտքն ու մտածողությունը սահմ մի կանգ առան ծայր առած բշխառության ու քառմնելի օրերի առաջ: Մարդիկ իրենց էներգիան, շանրն ու կարողությունը վատնում էին օր ու գիշեր անմիտ պատերազմի հետևանքով կոտորածներից պատված, երկար ճանապարհ կտրելուց հյուծված գաղթականության և որբերի մնացորդները գոնք սովոր ու մահվան ճիրաններից ազատվելու համար, որոնց մեջ մահվան մանգաղը հարցորներով յոր անողոր նունան էր անու:

Մայր Աթոռը, յոր սրբազնագույն Հայրապետով, միաբանության հետ դատը կալիիծ սրբներում, ճիգ էին թափում, գերմարդկային ոյժ գործ դնում ամոցքելու և սփոփելու հայ ժողովրդին և թերթեացնելու նրանց բաժին ընկած դատել վիշտն ու տանջանքը:

Չափ բնական է, որ նման պայմանների մեջ, երբ հայ ազգի գլխին մահվան սուրբ էր շողջողում, Մայր Աթոռի տպարանը այլևս նախկին թափով չէր կարող աշխատանք առաջ տանել: Հետզհետև բանկոր ձեռքեր պակասեցին և տպագրական նյութերի, թղթի և այլն սուացումը խիստ դժվարացավ, ուստի և Արարատ ամսագիրն անգամ փոխանակ ամիսը մի անգամ, մի քանի ամիսը միացրած համարներով էր լուս տեսնում 1914 թվից սկսած: Վերջապես 1920 թվից դադարեց Արարատ ամսագրի տպագրությունը թղթի և նյութերի պակասության պատճառով, և Արարատի փոխարեն 1920 թվի հունվարից սկսեց լուս տեսնել Էջմիածին շարաթաթերթը: Սա էլ յոր գոյությունը պահպանեց մի քանի ամիս և նոյն թվի վերջերին բոլորումին դադարեց<sup>4</sup>:

### Վերջ

\* Այս շրջանում Մայր Աթոռի տպարանից կած գրքերի մասին պրոֆ. Գրիգոր Խալաբրյանը նետելած է գրում նոյն ժամանակի 1908—10 տպարանի տեսուշ ու նրվանդ վարդապետին. «Ձևս կարող ծածկել իմ նիացմունքն նրանց (այսինքն գրքերի) արտաքինի մասին, որ ցոյց է տպան, թէ ձեր գեղարվեստական ճաշակը և թէ Մայր Աթոռի տպարանի բարձր առաջնանի հասցրած կատարելությունը»: Ծան. Ս. Խաչ.